

տումար հաստատած է, Կ. Պոլսոյ տնանկաց մատակարարութեան պէս մարմին մ'ալ Պրուսա հաստատած է 1761ին, իր կողմանէ ալ նշանակելի նուիրատուութիւններ ընելով: Սամուէլ Եպիսկոպոս Էջմիածնայ Կաթուղիկոս, Երուսաղեմայ եւ Կ. Պոլսոյ Պատրիարք ընտրուած է, սակայն ի սպառ մերժած է: Պրուսան նախամեծար համարելով, 1780ին պաշտօնը կը թողու եւ Կ. Պոլիս Խասգիւղ կը հաստատուի ուր կը վախճանի եւ կը թաղուի 1786ին իր պարզ տապանաքարը Խասգիւղի գերեզմանատան մէջ կ'երեւի ցայսօր: „ 24-տայ Էջմիածնի Կաթուղիկոս ընտրուելուն վաւերական յիշատակութիւնը բաց ի սա պարագայէն՝ որ Զմիւռնիոյ Առաջնորդ Աբրահամ Արքեպ. Աստապատցի երկու ընտրելի կ'առաջարկէր՝ Սամուէլ Եպս. Պրուսայու եւ Սիմէոն Եպ. (Աղանեանց, անդ էջ 28): Կը տարակուսիմ Երուսաղեմայ Պատրիարք ընտրուելուն վրայ. վասն զի Կոլոտ եւ Գրիգոր Պատրիարքներու միաբանութեամբ եւ Կարապետ Կաթուղիկոսի հաստատութեամբ 1726էն ետեւ Երուսաղէմի Պատրիարքութեան ընտրելին Երուսաղեմի Միաբանութեան անդամներէն պիտի առնուէր (Կոլոտ, էջ 28): Ինձ ծանօթ է միայն Կ. Պոլսոյ Պատրիարք ընտրուելուն վկայութիւնը. վասն զի Յակոբ Նալեան պատրիարքութենէ հրաժարելու ատեն՝ (1764) իրեն յաջորդ « ընտրեաց զՍամուէլ Վ. Երզնկացի՝ որ էր յայնժամ ի Պրուսա, եւ ի հրաւիրել նոցա զնա յայն պատիւ, նա հրաժարելով հրաժարեցաւ, եւ նօքս »